«Եւ սակայն հայ ազնուականներին բնաւ չէ պակսել հայրենասիրութիւնը, այլ միայն միաբանութի՛ւնը եւ սեփական ե՛սը ճնշելու, իրենց անհատական դիրքը հայրենիքի բարօրութեանը ստորադասելու ընդունակութիւնը»:

Հայ իշխանական տների անջատական ձգտումները մեծապէս նպաստաւորուել են առաւելապէս Հայաստանի բնական դիրքով: Այդ իրողութեան զուգահեռականները Մարքվարտ որոնել կարծում է լեհական եւ միջնադարեան գերման պետութեանց մէջ միայն: Եւ սակայն ինչպէս որ անարդար կը լինէր գերման ժողովուրդը դատապարտել իր ազնուականութեան հայրենադաւ ընթացքի համար,— շարունակում է Մ.,— նոյնը նաեւ, եթէ մենք հայ ժողովուրդը որպէս ամբողջութիւն կամենայինք պատասխանատու համարել այն անհաստատ, երերուն դիրքի համար, որ այնչա՛փ յատկանշական է հայ պատմութեան համար, եւ այդ՝ սկսած այն օրից, երբ հայ ազգը Արտաշիսի օրով իր սեփական պետութիւնը հիմնեց: Այնուհետեւ նա մշտապէս օրօրուեց Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ:

Այս Մարքվարտ արձանագրում է հետեւեալ յատկանշական պատմական փաստը: Այն, որ յունա-հռոմէական համաշխարհային պետութեան մշակութային ազդեցութեան տակ ապրող ժողովուրդներից միայն երկուսն են իրենց ազգային դիմագիծը եւ լեզուն անվթար պահել, մինչեւ անգամ սեփական քաղաքակրթութիւն մշակել: Դրանք են՝ մի կողմից՝ գերմանները, իսկ միւս կողմից՝ հայերը, վերջինների հետ հաշուելով մշակութապէս նրանցից կախում ունեցող վրացիներին եւս:

Պատմական այս իրողութիւնը Մարքվարտ բացատրում է պատահականութեամբ միայն եւ կամ, «եթէ կ'ուզէք, Նախախնամութեամբ»: Ինչպէս որ Գերմանիան ապահովապէս կորսուած պիտի լինէր, եթէ Վարոսի պարտութեան միջոցին (9 թուական. Քրիստոսից յետոյ) հռոմէական պետութեան գլխին կանգնած լինէր Պոմպէոսի եւ Կեսարի նման մի ռազմիկ իշխանաւոր եւ կամ նոյնիսկ Տրայանոսի նման «ժողովուրդների դահիճ» մէկը, նոյնը եւ աւելի՛ վատթարը դիւրութեամբ Հայաստանին վիճակուած պիտի լինէր, եթէ Օգոստոս կայսրը ժամանակին հռոմէական նահանգի վերածած լինէր այն (20 թ. Ք. Ա. եւ կամ 2 թ. Ք. Ց.): Եւ այդ՝ մանաւանդ այն պատճառով, որ հռոմէացիները դեռ Օգոստոս կայսրից առաջ արդէն երեք անգամ ամբողջապէս նուաճել էին Հայաստանը (Լուկուլլոս, Պոմպէոս, Անտոնիոս):

Հայաստանի համար հսկայական նշանակութիւն ունեցաւ այն, որ Օգոստոս հրաժարուեց նման մտքից եւ հայ թագաւորների իշխանութիւնը պահեց, զոհանալով նրանց հարկատու դարձնելով միայն: Եւ այդ օրինակին հետեւեցին նրան յաջորդող կայսրները, մինչեւ Թէոդոս Ա.: Իսկ եթէ Օգոստոս կայսրը Հայաստանը հռոմէական սոսկական նահանգի վերածած լինէր, այդ դէպքում հելլենականութիւնը մինչեւ Ե. դարու սկիզբը այնչափ զօրացած պիտի լինէր Հայաստանում, որ դժուար թէ կարիք զգացուէր ազգային գիր ու գրականութիւն ստեղծելու:

Այսպէս է լինում ահա, որ ինչպէս գերմանները, այնպէս եւ հայերը զերծ են մնում հռոմէացիների եւ յոյների մէջ ձուլուելու վտանգից:

Իրենց լեզուին նայելով հայերի Հնդեւրոպական ընտանիքի պատկանելու փաստը արձանագրելուց յետոյ Մարքվարտ հետեւեալ կարծիքն է յայտնում մեր ազգի ծագման մասին.—

«Յայտնի է որ, Հերոդոտ հայերին, ինչպէս նաեւ յետոյ Ստրաբոն հայերէնին փռիւգական ծագում են տալիս: Թէ ի՞նչ հիմունքներ է ունեցած նրանց այդ կարծիքը, մնում է անծանօթ: Յամենայն դէպս, Մարքվարտ կարծում է, թէ «կարելի չէ ապացուցել հայերէնի եւ փռիւգերէնի մօտիկ ազգակցութիւնը»:

Վերոյիշեալ տեղեկութիւնները սակայն մէկ բան որոշակի պարզում են: Այն, որ դեռ Քրիստոսից 5 ու 4 դար առաջ հայերի մասին այն յստակ տեսակէտը կար թէ՝ ա) անյիշատակ ժամանակներից չէ որ նրանք իրենց ժամանակակից երկրում են ապրում, եւ բ) որ հայերը արեւմուտքից ներգաղթած ժողովուրդ են:

Բացի դրանից կայ նաեւ այն, որ բաղդատական լեզուաբանութեան տուեալներով կարելի է ապացուցուած համարել, որ հայերէնի հիմնական տարրը լեզուների Հնդեւրոպական